

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՈՒՂԻՆ ՊԱԼԵՈԼԻԹԻՑ ՄԻՆԶԵՐԻ ՄԻՋՆԱԴԱՐ



(«ԾԻՆ» ՆՇԱՆԱԳԻՐ)

Համլետ Մարտիրոսյան

Նախորդ աշխատանքում կատարած հետազոտությունների արդյունքում պարզել ենք, որ Սյունիքի ժայռապատկերները վանկա-գաղափարագիր գրային համակարգ է, որը ստեղծվել է վերին հին քարի դարում (40-13 հազար տարի առաջ):¹ Սյունիքի ժայռափոր նշանագրերը ժամանակակից տիպի (կրոմոնյան) մարդու հետ տարածվել է արևմտյան Եվրոպայից մինչև հարավային Սիբիր, Եգիպտոսից մինչև Հնդկական թերակղզի: Ելնելով համանունության սկզբունքից, նաև պարզել ենք, որ գաղափարագրման լեզուն հայերենն է:


Սույն աշխատանքում խնդիր է դրված մի նշանագրի օրինակով ցույց տալ Սյունիքի նշանագրերի տարածման ուղիները և նրանց անընդհատ գործածությունը Հայաստանի տարածքում վերին քարի դարից մինչև մեր օրերը: Հետազոտման համար վերցրել ենք մի նշանագիր, որի միջոցով շումերական ու եգիպտական պատկերագրության մեջ գաղափարագրվել է Մայր Աստվածուհու անունը:

Մայր Աստվածուհի. նրան կոչել են Մուուցոդ, բայց դեռ հներն են նկատել, որ նա ունեցել է բազմաթիվ այլ անուններ: Նա բոլոր աստվածների ու կենդանի արարածների նախամայրն է, երկնային լույսի ակունքն է, անակունք լույսն է, նախնական ամբողջությունը, լիությունն ու հղիությունն է, Տիեզերքը ծնող առաջին շարժումն է, բոլոր սկզբունքների կրողն է, կենարար ջրի տիրուհին է, աճ ու պտղաբերություն տվողն է, կյանքի վերանորոգիչն է, մահ ու հարություն տվողն է, ժամանակի չափն է, բոլոր ծնունդների դուռն է...: Այսպես կարելի է անվերջ թվել Արարիչ Էության տարբեր ասպեկտները, որոնք հասու են մարդու բանականությանն ու հոգուն: Նրա ողորմածությունը շարժելու համար հնարել են հազար ու մի միջոց: Նրան միշտ սիրել են ու պաշտել աշխարհի բոլոր ծագերում:

Նրա անունը պատկերագրել են տասնյակ նշաններով. Լուսնի մահիկ, աստղ, գալար, շրջան, շեղանկյուն, լեռ, ծառ, տուն, եղջյուր, դուռ, աղավնի, կարապ, ծիծեռն, շուշան, օձ, ցուլ, կով, եղջերու, այծ, ..., որոնք ծառայել են որպես Աստվածուհու բազմաթիվ անունների գաղափարագրեր: Դրանց որոշ մասին, որոնք նաև վկայված են Սյունիքի ժայռապատկերներում, մենք արդեն անդրադարձել ենք: Այժմ ներկայացնենք մասնագետների համար մինչ օրս առեղծված մնացած մի նշանագիր ( կամ ), որն առայժմ հայտնի է միայն որպես Մայր Աստվածուհու էության ծնող, ծննդաբերող ասպեկտի խորհրդանշան, սակայն անհայտ է նրա ընթերցումը, որպես Աստվածուհու անվան գաղափարագիր: Այն

¹ . Հ. Մարտիրոսյան, Հայկական ժայռապատկերների և հին աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչությունները, Բազմավեպ, 2008, էջ 198-247

տարածված էր հին Առաջավոր Ասիայի ողջ տարածքում (տես նկար 1, 2, 3): Ըստ առկա տվյալների, Շումերում այն վկայված է վաղ դինաստիական ժամանակաշրջանին (Ք.ա. III հազ. սկիզբ) պատկանող նյութերում:²



Նկար 1. Միջագետքյան և խուրիական կնիքներ Մայր Աստվածուհու խորհրդանշանով (Ք.ա. III-II հազարամյակներ):

Այս նշանագիրը հաճախ պատկերվում է կանացի սանրվածքի ձևով: Նկար 2-ի առաջին պատկերը Ինաննայի բարձրաքանդակն է, որում նա պատկերված է այդպիսի սանրվածքով: Նույն նկարի հաջորդ պատկերները միջագետքյան և խուրիական կնիքներ են, որոնց վրա կանացի գլուխ է նույն սանրվածքով: Վերջին կնիքի վրա կանացի գլուխը



պատկերված է 30 թվի նշանագրից վերև (☉), որը, ինչպես հայտնի է, Լուսնի Աստծո Մին անվան գաղափարագիրն է:



Նկար 2. Մայր Աստվածուհու խորհրդանշանը որպես կանացի սանրվածք:

Սանրվածքի ձևով Մայր Աստվածուհու խորհրդանշանի պատկերումն ավելի տարածված էր Եգիպտոսում և Քանանում (տես նկար 3): Եգիպտոսում այս խորհրդանշան-սանրվածքի մեծ տարածվածության պատճառով գիտնականներն այն կոչել են «Հաթհորի սանրվածք», իսկ բուն նշանագիրն ավելի հայտնի է «Օմեգա նշան», քանի որ այն նման է հունական մեծատառ օմեգային:³ Եգիպտոսում այդ սանրվածքով պատկերվում էր ինչպես Հաթհոր Աստվածուհին (նկար 3, առաջին երկու պատկերները), այնպես էլ Միջերկրական ծովի արևելյան ափերին պաշտվող նրա նմանակները (Քեդեշ, Աստարտե, Աշերահ):

² . J. Black, A. Green, Gods, demons and symbols of ancient Mesopotamia, University of Texas press, Austin, 2000, p. 146

³ . Նույն տեղում




Նկար 3. Եգիպտական և քանանական աստվածուհիները Մայր Աստվածուհու խորհրդանշան-սանրվածքով:

Նկար 3-ի երկրորդ պատկերում (Ք.ա. 1300-1200թթ) Քեդեշ Աստվածուհին է, իսկ հիերոգլիֆիկ արձանագրությունը հաղորդում է. «Քեդեշ, Երկնքի թագուհի, աստվածների տիրուհի, Ռայի ակն, իրեն հավասարը չունեցող»:⁴ Սա «Հաթհորի սանրվածք» կրող աստվածուհիների տիտղոսաշարի մի փոքր մասն է միայն: Օմեգա նշանը Եգիպտոսում հանդիպում է կոյաբզեզ-կնիքների վրա (𐀀), ինչպես նաև գործածվել է որպես հիերոգլիֆ (𐀁): Օմեգա նշանն առկա է նաև խեթա-լուվիական հիերոգլիֆիկ գրային համակարգում (𐎎, 𐎏), սակայն առայժմ անհայտ են և ընթերցումը, և իմաստը: Կարծում ենք այսքանը բավական է, որպեսզի ընդհանուր պատկերացում տրվի օմեգա նշանի գործածության ասպարեզների ու տարածվածության մասին: Այժմ տեսնենք թե ինչ է հայտնի օմեգա նշանի իմաստի վերաբերյալ:

Մայր Աստվածուհու և «օմեգա» նշանի միջև կապը հայտնի դարձավ Միջագետքում կասիտական իշխանության ժամանակաշրջանին պատկանող և kudurru կոչվող սահմանաքարերի տվյալներով: Կասիտական սահմանաքարերից մեկի վրա (Melishihu-ի սահմանաքար, Ք.ա. XIIդ, նկար 4ա) Ան, Էնլիլ, Հայ աստվածների պատկերագիր անվանաձևերից հետո դրված է ինչ որ Աստծո անվան պատկերագիրը, որը կազմված է օմեգա նշանից և ծակող, կտրող զենքի (դանակ, դաշյուն, տեգ) պատկերից (նկար 4գ): Նույն սահմանաքարի հակառակ երեսին սեպագիր արձանագրության մեջ Ան, Էնլիլ, Հայ անուններից հետո նշվում է Նինհուրսագ (^d Nin-hur-sag-gaz) Մայր Աստվածուհու անունը:⁵

⁴ . I. Cornelius, *The Many Faces of the Goddess: The Iconography of the Syro-Palestinian Goddesses Anat, Astarte, Qedeshet, and Asherah c.1500-1000 BCE*. Fribourg, Academic Press, 2004. p. 83

⁵ . W. H. Ward, *The seal cylinders of western Asia*, The Carnegie institution of Washington, 1910, p. 404



Նկար 4. ա) Melishihu-ի սահմանաքարի ընդհանուր տեսքը, բ) առաջին յոթնյակ աստվածների անունների պատկերագրերը, գ) Նինհուրսագ Աստվածուհու անվան պատկերագիրը (Ֆոտոպատճեն և գծագրությունը):

Այսպիսով փաստվում է, որ օմեգա նշանով գրվել է Մայր Աստվածուհու՝ Նինհուրսագի անունը, ով շումերական դիցարանում գերագույն եռյակի հետ (Ան, Էնլիլ, Հայ=Էնկի) գտնվում էր նույն աստիճանի վրա: Մյուս կողմից օմեգա նշանին տրվել է ամենատարբեր բացատրություններ (կեղծամ, կշեռք, խանձարուր, Վերոնիկայի վարսեր կամ Քնար համաստեղություն, արգանդի սխեմատիկ պատկեր, պայտ և այլն):⁶ Վերհիշելով Նինհուրսագի մականունները (Ծննդաբերության տիրուհի, Մայր, Աստվածների մայր, Բուր երեխաների մայր), պիտի ենթադրել, որ դրանցից առավել հավանականը «արգանդի սխեմատիկ պատկեր» բացատրությունն է: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ աստվածների բաբելական ցուցակում (An=Anum) Նինհուրսագի Nintu = Ծննդաբերության տիրուհի մականվան դիմաց դրված է բաբելական Šassūru դիցուհու անունը⁷, իսկ վերջինս աքքադերենում ունի «արգանդ» իմաստ (շումերեն zizna, zezna, zazana, zazna = աքքադերեն šassūru = «արգանդ»): Հավելենք նաև, որ Ք.ա. III-I հազարամյակներում Միջագետքի շատ թագավորներ Նինհուրսագին հռչակել էին իրենց մայր (Մեսիլիմ, Էաննատում, Համմուրաբի, Նաբուգոդոնոսոր և այլն):

Այսպիսով, օմեգա նշանի «արգանդ» իմաստը կարող է համապատասխանել Մայր Աստվածուհու էությանը, սակայն բաց է մնում ամենակարևորը. ո՞ր լեզվում և ինչպե՞ս է ընթերցվում «արգանդ» իմաստ կրող օմեգա նշանագիրը: Այս հարցերի պատասխանը գտնելու համար պիտի անդրադառնանք եգիպտական տվյալներին:

⁶ . O. Keel, U. Christoph, Gods, Goddesses, and Images of God in Ancient Israel. Minneapolis, 1998

⁷ . R. Litke, A Reconstruction of the Assyro-Babylonian God-Lists, AN:^dA-Nu-Um and AN: ANU ŠÁ AMELI. (A reprint of 1958 Ph.D. dissertation). New Haven: Yale University Press, 1998

Եգիպտական դիցարանում Մայր Աստվածուհու ընդգծված էություն կրող Աստվածուհին հայտնի է Մուտ անունով, ով համարվում է մայրերի մայր, Արևի Աստծո մայր, աստվածների մայր: Դիցուհու Մուտ անունը գրվում է տարբեր եղանակներով, որոնցից հիմա կքննարկենք հիմնականները:

1. (=m) + (=t) + («աստվածուհի» ցուցիչը) = Mt Աստվածուհի:

Այս գրելաձևը հետաքրքիր է այն առումով, որ արտահայտում է դիցանվան հնչյունական արժեքը:

2. (=mt) + + Աստվածուհի = Mt Աստվածուհի: Մերմնաթափող

առնանդամն ունի mt ընթերցում, «սերմ, սերունդ, ժառանգ» իմաստներ, իսկ նախնական պատկերագիր նշանակությունն է «սեռական մերձավորություն»: Հայերենում սրա համապատասխանն է **մուտ** = mt = «սեռական մերձավորություն»: Այս հիերոգլիֆն ունի նաև hj ընթերցում և «ամուսնացած տղամարդ» իմաստը, որն էլ նույնական է հայերեն **հայ** = hj = «ամուսին, այր» բառի հետ:

Դիցանվան գրելաձևի այս երկու օրինակները ցուցադրում են երկու կարևոր առանձնահատկություն. նախ, եգիպտերեն բառերն իմաստներով ու հնչողությամբ իրենց ճշգրիտ գուգահեռներն ունեն հայերենում և երկրորդ՝ դիցանունը կազմող բառի իմաստները սերտ կապ ունեն սեռական մերձեցման, հղիացման և ծննդաբերության հետ և հետևաբար, կարող էին դառնալ Մայր Աստվածուհու անուն կամ մականուն: Սակայն, մյուս կողմից այս իմաստներն ընդհանրություն չունեն օմեգա նշանի այն ենթադրյալ իմաստների հետ, որոնք բխում էին շումերական տվյալներից: Ուրեմն կարելի է ենթադրել, թե Մայր Աստվածուհու Մուտ անվանումը նրա մի հավելյալ մականունն էր Եգիպտոսում: Հաջորդ օրինակը մեզ մոտեցնում է մեր նպատակակետին, քանի որ վկայում է, որ եգիպտական Մուտ դիցանունը գրվել է նաև օմեգա նշանագրով:

3. - Թեև օմեգա նշանագիր պատկերող եգիպտական հիերոգլիֆի ընթերցումն

ու իմաստն անհայտ են, սակայն եգիպտագետներն անհարկի այս գրելաձևին էլ են վերագրում mt ընթերցում: Անշուշտ սա նույն Մուտ Աստվածուհու, բայց արդեն մի այլ անուն է:

Այս գրելաձևը օմեգա նշանի վերձանման հարցում կառչելու հնարավորություն է տալիս: Գրելաձևի մեջ որպես Մայր Աստվածուհու ցուցիչ է օգտագործվել ձու պատկերող հիերոգլիֆը (𓄿), որը, որպես գաղափարագիր, ունի «որդի» և «ձու» իմաստներ: Մի կողմից հայերեն «ձու» բառն ունի ձու = «ձկնկիթ» (նախնականը), ձու = «հավկիթ» և ձու = «ամորձիք» իմաստներ: «Ամորձիք» նշանակությունը դիցանվան իմաստը մերձեցնում է նախորդ

օրինակի իմաստներին: Մյուս կողմից, «ձու» բառը հայերենի շատ բարբառներում հնչեցվում է «ծ» հնչյունով (ծու) և ըստ օրինի կարող է համարվել համանուն «ծուն» բառին, որը ծին =«ծնունդ, ծագում; արգանդ; ընկերք» բառի ձայնադարձն է (շատ բարբառներում էլ «ծուն, ծին» բառն է հնչեցվում «ձ» հնչյունով):⁸ Եթե մեր այս դաստիարակները ճիշտ են, ապա ծին =«արգանդ; ընկերք» իմաստները նույնանում են օմեգա նշանագրի համար շումերական տվյալների ընձեռնած իմաստի հետ: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ շումերենում ևս «արգանդ» և «ձու, ձկնկիթ» բառերը համանուն են (zizna, zezna, zazana, zazna =«արգանդ» և «ձու, ձկնկիթ»):



Նկար 5. Կարնակի մերձակայքում գտնվող Մուտ Աստվածուհու տաճարի ավերակները և նրա հարևանությամբ գտնվող լճակը:

Կա ևս մի փաստ, որը միարժեքորեն հաստատում է օմեգա նշանագրի կարևորությունը Եգիպտոսում Մայր Աստվածուհու անվան գրեթե անստեան կյանից: Խոսքը վերաբերում է Մուտ Աստվածուհու տաճարին կից գտնվող լճակի գծագրությանը (տես նկար 5), որը կարծես թե վրիպել է Եգիպտագետների ուշադրությունից: Լճակի մակերեսն ունի օմեգա



նշանագրին շատ մոտ գծագրություն (մանավանդ լճակը երիզող շամբուտի գծագրությունը): Լճակը երեք կողմերից շրջապատում է տաճարը և տպավորություն է ստեղծվում, թե տաճարը դուրս է գալիս լիճ - արգանդի/ընկերքի միջից: Հին Եգիպտոսում մեծ կարևորություն է տրվել այդ լճակին, որը կոչվել է Իշերու: «Մուտ, Իշերույի Մեծ Տիրուհի, Երկնքի Տիրուհի, աստվածների թագուհի», - այսպես են դիմել Մուտին և այդ տիտղոսաշարի առաջին տեղում «Իշերույի Մեծ Տիրուհի» պատվանունն էր: Տաճարը կառուցվել է Ք.ա. XV-XIV դդ, Հատշեպսուտ, Թութմոս III և Ամենհոթեպ III փարավոնների օրոք: Այստեղ ևս օգտագործվել է համանունության սկզբունքը, քանի որ Եգիպտերենում «արգանդ» բառը գրվում է «ադբյուր, ակունք, լճակ» իմաստը կրող հիերոգլիֆով (𓄎): Արդյունքում կրկնակի շեշտվել է այդ լճի կապը Մայր Աստվածուհու հետ («լիճ» բառի ու Աստվածուհու անվան համանունություն և լճի գծագրության ու Աստվածուհու անունը գաղափարագրող «ծին» նշանագրի նույնություն):


Մուտ դիցանվան գրության ամենատարածված ձևը բերված է ստորև և հենց այս ձևն է տալիս Մայր Աստվածուհու անվան և օմեգա նշանագրի ճշգրիտ իմաստն ու հնչյունական արժեքը գտնելու բանալին:

⁸. Հ. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, տես «ծին», «ծան» և «ծունգ» բառահոդվածները:

4.  - Այս տարածված գրելաձևում

Մայր Աստվածուհու անունը պատկերագրվել է ցին թռչունի պատկերով: Ահա այստեղ է, որ հայերենն ունի հիմնավոր ասելիք. թռչնի «ցին» անվանումը հայերենում համանուն է ծին = «ծնել; արգանդ, ընկերք» բառին և հետևաբար հայերեն լեզվամտածողության տեր մարդն էր միայն կարող կազմակերպել նման գաղափարագրում: Այդ գիշակեր թռչունն իր անունից բացի չունի մի այլ արժանիք, որպեսզի նրա պատկերով գաղափարագրվեր Մայր Աստվածուհու անունը: Արդյունքում, այս համանունության բացահայտումը մեզ թույլ է տալիս պնդելու, որ Մայր Աստվածուհու՝ ծննդաբերության Աստվածուհու անունը հնչցվել է Ծին: Սակայն հայերենում «ծին» բառն արտահայտում է բուն ծնելու գաղափարը (ծնել) և ծննդաբերության երկու կարևոր օրգանները (արգանդ և ընկերք): Որեմն «Ծին» բառի այս իմաստներից ո՞րն էր Մայր Աստվածուհու անվան իրական իմաստը: Այս հարցին պատասխանելու համար պիտի դիմենք օմեգա նշանագրի գծագրության օգնությանը:


Քանի որ Եգիպտոսում Մայր Աստվածուհու անունը գաղափարագրվել է և ցին թռչունի պատկերով () , և օմեգա նշանագրով () , ապա բնական է, որ «ծին» ընթերցում պիտի վերագրենք նաև օմեգա նշանագրին: Եթե սրան հավելենք հայերենում «ծին» բառի իմաստները, ապա հեշտությամբ կնկատենք, որ օմեգա նշանագիրը սխեմատիկ ձևով պատկերում է իգական անդամը (vulva) և արգանդը միասին, իմա՝ ծննդաբերության ամբողջական գործարանը: Սա էր օմեգա՝ այլևս արդեն «ծին», նշանագրի առեղծվածը, որը կարող էր լուծվել միայն հայերենի դաշտում:

Այժմ մեր այս բացահայտումով ( = ծին) վերադառնանք Շումեր և տեսնենք, թե ինչպես պիտի հնչեր Նինհուրսագի անունը շումերենում: Ըստ առկա տվյալների, Եգիպտոսում Մայր Աստվածուհու անունը գրվում էր միայն «ծին» նշանագրով: Միջագետքում




Սկար 6. Ուշ կասիտական և բաբելական kudurru-ներ, որոնց վրա Մայր Աստվածուհու անունը պատկերագրված է միայն «ծին» նշանագրով:⁹ նույն դիցանունը գրվել է և միայն «ծին» նշանագրով (տես նկար 6), և «ծին» նշանագրի և

⁹ . U. Seidl, Die babylonischen Kudurru-Reliefs. Symbole mesopotamischer Gottheiten, Academic Press Fribourg, 1989

կտրող, ծակող զենքի կամ գործիքի պատկերի կցագրությամբ ( , Մելիշիհույի կուղուրու, տես նկար 4): Հետևաբար կարող ենք ասել, որ Աստվածուհու անունը գրվել է ինչպես Ծին, այնպես էլ մի բարդված բառով, որը սկսվել է «ծին» բառով և ավարտվել հիշյալ զենք/գործիքի անվամբ: Այս բարդված անվանաձևն ընթերցելու համար նախ անհրաժեշտ է ընթերցել զենք/գործիքի անվանումը, որի դիմաց հայերենը կարող է առաջարկել հետևյալ բառերը.

կոտ > կոտոր = «կտոր, պատառ», կտրել = «հատել, կտրել», կտրոց/կտրիչ = «գործիքը, որով կտրում են» բառերի արմատը: Սա հայերենում համանուն է կոտակ = «փոքր», կոտիկ = «անասունի ձագ» բառերի կոտ = «փոքր» արմատին (այս վերջինից էր կազմված հայ Արշակունիներից Խոսրովի Կոտակ մականունը):¹⁰ Հետևաբար «ծին» և «կոտ» նշանագրերով դադափարագրված դիցանվան համար կունենանք ծին+կոտ = Ծնկոտ = «փոքր ծնող, մանուկ, ծնող»:

ած - այս արմատն ունի «կտրել, սափրել» իմաստ, որից՝ ածելի = «դանակի տեսակ, որով մազերը կտրում են, սափրում»: Այս արմատն ունի նաև «անել, կատարել; բերել» իմաստներ: Հետևաբար դիցանվան համար կունենանք ծին+ած = Ծնած = «ծնող, ծին բերող»:

արդ(ն) = «տեգ, նիզակ», որը համանուն է արդ = «կարգ, օրենք; պտուղ, բերք, արդյունք, վաստակ; գործ» բառին, որն ունի նաև «յարդ» ձև:¹¹ Այստեղ տեղին է ուշադրություն դարձնել, որ քննարկվող պատկերն () ավելի նման է նիզակի ծայրի սլաքի՝ տեգի:¹² Այս

¹⁰ . Հ. Աճառյանը հետևելով Հ. Հյուբշմանին, հայերեն բառը փոխառություն է դնում պահլավերեն kōtak = «մանուկ, երեխա» բառից: Մակայն քանի որ հայերեն բառի իմաստը («փոքր») ավելի նախնական է քան պահլավերեն բառի «մանուկ» իմաստը, ապա կարծում ենք, որ պահլավերեն բառն է հայերենից փոխառյալ: Ինչպես «մանր» իմաստից ծագել է «մանուկ» բառը, նույն կերպ կոտ = «փոքր» բառից ծագել են կոտակ = «մանուկ, երեխա» և կոտիկ = «անասունի ձագ» բառերը: Առավել ևս կոտ = «փոքր» բառը հնարավոր է կոտ = «մանր սերմ» բառի ձայնադարձն է, իսկ վերջինս իրանական լեզուներում բացակայում է:

¹¹ . Այս բառերին համանուն է նաև յարդ = «հարդ, երդ, դարման»: Այս համանունները հնարավորություն են տալիս նոր մեկնաբանություն տալ Ծիր Կաթինին հայոց կողմից Հարդագողի ճանապարհ անվանելու մասին Շիրակացու հաղորդած գրույցին: Շիրակացին հաղորդում է. «Դարձյալ հայոց նախնիներից ոմանք ասում են, թե Վահագնը՝ հայերի նախնին, մի խիստ ձմռան ժամանակ գողացել է ասորեստանցիների նախնու՝ Բարշամի, դարմանը, որին մենք հարդագողի հետք ենք անվանում» (Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 95-96): Անշուշտ սա ժողովրդական ստուգաբանությամբ մեզ հասած տարբերակ է, որում յարդ = «(տիեզերական) կարգ, օրենք» բառը ստուգաբանվել է յարդ = «հարդ, դարման» բառով, իսկ «գողել» բառի «թաքցնել» իմաստը փոխարինվել է «գողանալ» իմաստով: Իրականն այն է, որ Վահագնը ասորեստանցիների Բարշամից թաքցրել է տիեզերակարգն ու նրա պահպանման օրենքները: Այս մեկնությունն իր հերթին խոսում է այն մասին, որ գրույցը գալիս է պատկերագրության ժամանակներից և ցայտուն օրինակ է, թե պատկերագրության ընթերցման ժամանակ սխալ համանուն ընտրելու կամ պատկերագիրը տառացի ընթերցելու արդյունքում ինչ անհեթեթ մեկնաբանություններ կստացվեն:

¹² . Այս առիթով նշենք, որ թյուրիմացություն է Հ. Հյուբշմանի այն կարծիքը, թե հայերեն «տեգ» բառը փոխառություն է պահլավերեն անգոյ՝ tēy բառից: Վերստին փոխառությունը եղել է հակառակ ուղղությամբ: Դրա մասին է վկայում շումերեն teĝ4, tiĝ4, tiĝ4 = «նետասլաք, տեգ» բառի գոյությունը:

տարբերակում դիցանունը կստանա ծին+(յ)արդ = ծին-ու-(յ)արդ = Ծինուարդ/Ծինույարդ = «ծինը կարգավորող; ծին կատարող, ծնող»:

Դիցանվան բարդված ձևի համար բերված երեք տարբերակներն էլ որակապես տալիս են նույն իմաստը, սակայն գերադասելի է երրորդ տարբերակը երկու պատճառով. նախ, զենքի պատկերն առավել նման է արդն = տեգի, քան դանակի կամ ածելիի և երկրորդ՝ նույն հնչողությամբ իզական դիցանուն ենք տեսնում Շումերից ավելի քան 1000 տարի անց վկայված ուրարտական դիցարանում (⁴Šinuiardi = ⁴Ši-nu-ia-ar-di-e, ⁴Ši-nu-ú-ia-ar-di-i-e):

Անդրադառնալով ⁴Šinuiardi դիցանվանը, Գ. Ջահուկյանն այն մասնատում է Šinu(i) և (i)ard մասերի, որոնցից վերջինս նույնացնում է բնիկ հայերեն «արդ» արմատին, իսկ առաջին բաղադրիչի մասին գրում է. «Բոլոր դեպքերում Šinuiardi աստվածուհու անվան մեջ առանձնանում է առայժմ չմեկնված Šinu(i) բաղադրիչը: ... այդ Šinu(i)-ի մեջ կարող ենք տեսնել հայ. **ծին** բառի վաղ **ճինտ** ձևը, որ ծագում է հ.-ե. *g'en- «ծնել, սերել» արմատի *g'enos- ածանցյալից և միջակա օղակ է երկուսի միջև: ... Այսպիսով Šinui - ardi -ն եղած պիտի լինի հին հայկական դիցարանի ծննդի հովանավոր աստվածուհին, որի պաշտամունքը, թերևս, անցել է նաև ուրարտացիներին և տեղական բնույթ չի ունեցել»:¹³

Անվանի լեզվաբանը կատարելով դիցանվան ճիշտ լեզվաբանական վերլուծություն, իր այս վերջին ենթադրությամբ հենվում է հայերի եկվորության և ուրարտացիներից տարբեր էթնոս լինելու մերժելի տեսակետի վրա: Ինչ վերաբերում է «տեղական բնույթին», ապա վերը բերված օրինակները վկայում են, որ այս Աստվածուհու պաշտամունքը տեղական է, իսկ դիցանվան գրելաձևը գալիս է պատկերագրության վաղնջական ժամանակներից: Ավելին, ստորև բերված օրինակների քննությամբ կփորձենք հիմնավորել, որ «ծին» նշանագրով Մայր Աստվածուհու (ծննդաբերության Դիցուհու) անվան գաղափարագրությունը ծագել է Սյունիքի ժայռապատկերների փորագրման ժամանակներում, հազարամյակներ շարունակ կենդանի է մնացել հայկական մշակույթում և առ այսօր առկա է հայոց կիրառական արվեստում:

Այժմ «ծին» նշանագրի ետևից վերադառնանք Սյունիք: Ըստ մեր ձեռքի տակ եղած տվյալների, Սյունիքի ժայռապատկերներում գտնում ենք «ծին» նշանագրի մոտ մեկ տասնյակ առանձին գործածության օրինակներ և նույնքան՝ կցագրված այլ նշանագրերի հետ (տես նկար 7:

¹³ . Գ. Ջահուկյան, հայկական շերտը ուրարտական դիցարանում, ՊԲՀ, 1986, էջ 43



«Ծին» նշանագրի նմուշներ Սյունիքի ժայռապատկերներից:



Այծապատկերին կցագրված «ծին» նշանագիրը: Այս կցագրությունն ընթեցվել է Դիք Ծին = Աստված Ծին:



«Ծին» նշանագիրը եղջերուի պատկերի հետ: Ընթեցվել է Եղ Ծին = Գոյություն Ծնող:




«Ծին» նշանագիրը ցուլի պատկերի հետ: Ընթեցումն է Ցուլածին (հիշենք «Մասնա Ծոռեր»-ի Աստղիկ Ցուլածինը:



«Ծին» նշանագիրը օձի և այծի պատկերների հետ:



Այլ նշանների հետ «ծին» նշանագրի կցագրության նմուշներ Սյունիքի ժայռապատկերներում:



«Ծին» նշանագիրը Վան և Ուրմիա լճերի միջնաշխարհից, առաջին նկարը՝ դրվագ Կանգավարի ժայռապատկերներից, երկրորդ նկարը՝ «ծին» նշանագիրը Տիրծինի ժայռապատկերներում:

Նկար 7. «Ծին» նշանագիրը հայկական ժայռապատկերներում:


Ժայռապատկերներում «ծին» նշանագիրը հիմնականում հանդես է գալիս Մայր Աստվածուհու անունը/մականունը պատկերագրող կենդանապատկերների հետ (այծ, ցուլ, եղջերու, օձ) և ամբողջացնում է վերին հին քարի դարում նրա պաշտամունքի պատկերը: Ինչպես քննարկված նախորդ նշանագրերը, «ծին» նշանագիրը ևս հայտնվելով ժայռապատկերների փորագրման ժամանակներում, անընդհատ առկա է Հայաստանի տարածքի հոգևոր մշակույթում:



Նկար 8. «Ծին» նշանագիրը մեծ չափերի ժայռափոր նշանների տեսքով: Նման մեծ չափերի ժայռափոր նշաններ են հայտնաբերվել Հայաստանի բազմաթիվ հնավայրերից: Կարծիք կա, թե այդ նշանները փորագրվել են ուրարտական շրջանում:¹⁴


¹⁴ . Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 209, տես նաև համապատասխան հղումները:

Պատմական Հայաստանի տարածքում «ծին» նշանագրի գործածությունը չի ընդհատվում քրիստոնեության ընդունումից հետո, այլ լայն կիրառում է դրսևորում հոգևոր-կիրառական արվեստների ամենատարբեր բնագավառներում (ճարտարապետություն, խաչքարեր, մանրանկարչություն, գորգագործություն և այլն): Ըարտարապետության ասպարեզում «ծին» նշանագրի ամենատարածված գործածությունը տեսնում ենք եկեղեցաշինության մեջ: «Ծին» նշանագրն այստեղ դրսևորվում է որպես պատուհանների



Նկար 9. «Ծին» նշանագիրը որպես եկեղեցու պատուհանի քիվ. ա) Անիի Մայր տաճար, բ) Երերուքի բազիլիկ, դ) Ջուխտակ վանք¹⁵, ե) Գոմքի ս.Գևորգ վանք (Վասպուրական), գ) Հայրավանք, է) Աղթամար, ը) ս. Մինաս (Էրզրումի մոտակայքում):

քիվերի ձև: Նշել ենք, որ «ծին» գաղափարը կապված է «դուռ/դարպաս/պատուհան» գաղափարի հետ: Դուռը որևէ փակ տեղ մտնելու կամ այնտեղից դուրս գալու ճանապարհը,



Նկար 10. Ինաննայի դուռը միջագետքյան կնիքների վրա: Դռան աջ ու ձախ սեւերը Դիցուհու անունը գաղափարագրող պատկերագիրն է:


անցքը, բացվածքն է: Այդպիսի մի դուռ/դարպաս/պատուհան է և այն անցքը, որի միջով հասունացած պտուղը մոր արգանդից լույս աշխարհ է գալիս (կամ որով հղիացնող սերմը արգանդ է մտնում): Ամեն օր Արևը Ստորերկրյա աշխարհից (արգանդ) այդպիսի դարպասի միջով է ծագում

(ծնվում) (տես նկար 10 առաջին պատկերը, որում Արևի Աստվածը ծագում/ծնվում է երկգագաթ լեռն ընդգրկող Ինաննայի դարպասից):

¹⁵ . Ջուխտակ վանքի քիվի երկու կողմերում քանդակված են աղավնիներ՝ Սուրբ Հոգու խորհրդանշանը: Հիշեցման կարգով ասենք, որ շումերենում «ծին» և «աղավնի» բառերը գրվում են նույն սեպագրով:

Շումերենում IG = EK սեպը ունի «դուռ» (ek/ig =«դուռ», ^gek/ig =«դուռ», որտեղ giš-ը «փայտ» իմաստն արտահայտող ցուցիչն է) և «լինել, գոյություն ունենալ, լույս աշխարհ գալ, առաջանալ» (to bi, to exist) իմաստներ: Այս վերջին իմաստների համար սեպանշանին վերագրվում է galz ընթերցում: Շումերեն բառերն իրենց իմաստներով ճշտիվ համապատասխանում են հայերեն եկ =«գալը, գալուստ» (բարբառներում նաև իգ-, էգ- հնչեցմամբ) արմատին և սրանից ծագած գալ =«գալ» պակասավոր բային: Վերջինից ունենք գրաբարյան գալ ի մեջ =«գոյանալ, առաջանալ, ծնվել» ձևը, իսկ եկ =«գալը, գալուստ» իմաստը ենթադրում է դուռ/դարպասի գոյությունը, առավել ևս եթե այն գործածվում է «փայտ» ցուցիչով, ինչը հուշում է, որ խոսքը վերաբերում է գալու հնարավորությունն տվող միջոցին՝ փայտե դռանը:


Այս ամենը վկայում են «ծին» և «դուռ» գաղափարների խորքային կապի մասին: Եվ ահա այս ամենի ամփոփումը տեսնում ենք միջնադարյան Նշանագիրք իմաստնոցում, որտեղ «ծին» նշանագիրքը բերվում է «դուռ» իմաստով:




Նկար 11. «Դուռ» իմաստը կրող նշանագրերն ըստ միջնադարյան ձեռագրերի:¹⁶

Հետևաբար կարող ենք ասել, որ Նշանագիրք իմաստնոցում «ծին» նշանագիրքը գործածվել է իր ավելի լայն ու ընդհանրական իմաստով: Հավանաբար այս իմաստով է «ծին» նշանագիրքը վերցվել որպես եկեղեցական պատուհանների քիվերի ձև:

Քրիստոնեական շրջանի հայկական մշակույթում «ծին» նշանագրի առավել լայն գործածությունը տեսնում ենք գորգարվեստում: Նկար 12-ում բերված են մի քանի գորգերի կենտրոնական վահանների պատկերներ: Վահանի կենտրոնը զբաղեցնում է մի քառակուսի, որի ներսում, իմա՝ գորգի բուն կենտրոնում, սրբազան նշաններն են, որոնք հավանաբար արտահայտում են այն աստվածային էության անունը, ում նվիրաբերվում է տվյալ գորգը:



¹⁶. Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 238



Նկար 12. «Ծին» նշանագրերով հայկական գորգերի նմուշներ:

Այդ նշաններից են արմեն/արմին նշանագիրը, կեռխաչը, գագաթներով կից երկու եռանկյունիները և այլն, որոնք գալիս են ժայռագիր նշանագրերի ժամանակներից: Կենտրոնական քառակուսին շրջապատված է «ծին» նշանագրերով, որոնց թիվը ութն է: Կարծում ենք «ծին» նշանագրերի միջոցով արտահայտված այս թիվը նշանակում է առաջին ութ աստվածների ծնունդը: Ընդ որում, «ծին» նշանագրի իրար կից գույգերը տարբերակվում են իրենց գույներով, ինչը հավանաբար արտահայտում է նրանց արական և իգական էությունները (ըստ վաղ միջնադարյան հայ մատենագրության, այդպիսի չորս գույգերից էր կազմված նախաքրիստոնեական դիցարանը. Արամագդ, Վահագն, Միհր, Տիր և Անահիտ, Աստղիկ, Նանե, Բարշամին): Վերջապես մեզ հայտնի հաջորդ նշանագիրը, որ տեսնում ենք գորգերի վրա, դա Մայր Աստվածուհու անուններից ևս մեկը գաղափարագրող ութաթև աստղանշանն է: Թվարկված նշանագրերի առկայությունը վկայում է, որ տվյալ գորգատեսակները նվիրված են Մայր Աստվածուհուն և հավանաբար արտահայտում են աստվածների ծննդաբանության ու արարչության սյուժեն:¹⁷ Այս տեսանկյունից ամեն մի գորգի տեսակ նշանագիր մատյան է, որի ընթերցումը շատ արժեքավոր տվյալներ կհաղորդի հայոց նախաքրիստոնեական կրոնի ու աշխարհայացքի մասին:

Այսպիսով «ծին» գաղափարագրի քննությունը ևս ցույց է տալիս, որ սկսած վերին հին քարի դարից, Հայաստանում անընդհատ գոյություն է ունեցել Մայր Աստվածուհու հզոր պաշտամունք:

Հիշյալ գորգերը մեզ են հասել XIX-XXդդ, գործել են գեղջուկ կանայք, ովքեր գաղափար անգամ չունեին ոչ նշանագրերի ու նրանց իմաստների, ոչ նախաքրիստոնեական աստվածների ու նրանց պաշտամունքի մասին: Նրանք գորգագործության արվեստը ժառանգել են իրենց մայրերից և այդ ճանապարհով դարեր շարունակ այն ժառանգաբար մի սերնդից փոխանցվել է մյուսին: Սակայն գորգերի նշանագրային կառուցվածքը և այդ

¹⁷. Գորգագետները «ծին» նշանագիրը թյուրիմացաբար նույնացնում են վիշապի պատկերի հետ, իսկ նման նշաններ պարունակող գորգերն անվանում վիշապագորգեր (Մ. Ղազարյան, Հայկական գորգ, Երևան, 1988; Վ. Թաթիկյան, Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, տես նաև բերվող հղումները): Գորգերի վրա կան վիշապի նշաններ, սակայն նրանք տարբեր են «ծին» գաղափարագրից և նույնպես գալիս են ժայռապատկերների ժամանակներից, որին կանդրադառնանք մի այլ աշխատանքում:

նշանագրերի միջոցով գաղափարագրված դիցաբանական սյուժեների առկայությունը խորհել է տալիս, որ նախաքրիստոնեական ժամանակներում գորգերը ծիսա-պաշտամունքային համակարգի մաս են կազմել և գորգի նշանագրային տեքստերը կազմել են քրմերը: Պիտի կարծել, որ ժամանակի ինչ որ պահի գորգագործությունն աշխարհիկ կյանք է մտել քրմական



Նկար 13. «Ծին» նշանագրերով ամբողջական գորգի պատկեր (Վ. Թաթիկյան, Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, պատկեր 121):

աշխարհից՝ ստիպողական հանգամանքների արդյունքում: Առավել հավանական ենք համարում, որ դա տեղի է ունեցել Հայաստանի քրիստոնեացման ժամանակներում: Տաճարներից վնդված ու կենդանի մնացած քրմերի այն մասը, որ չհարեց նոր կրոնին ու չմտավ նրա քահանայական դասի մեջ, գորգագործությունը մտցրեց հին կրոնին հավատարիմ մնացած գյուղական ընտանիքներ այն հույսով, որ մի օր կվերականգնվի հին հավատքը և գորգերը կվերադառնան տաճարներ: Սակայն դա տեղի չունեցավ, բայց գյուղական ընտանիքներում գորգագործությունը պահպանվեց: Նրանք սերնդից սերունդ, որպես արդեն նախազարդ, ճշգրտորեն ընդօրինակում էին քրմերից իրենց անցած նշանագիր գորգերը և այդ պրոցեսը շարունակվում է առ այսօր:

Հ. Մարտիրոսյան

hmart@yerphi.am

35-00-28

091-07-12-03

